

**«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Հաստատում եմ»

Ռեկտոր _____ Խաչատրյան Գ. Կ.

«11» ____ 07 ____ 2013թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՔՈԼԵՁԻ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ

ՆՊԱՍՏՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

Հաստատված է

ՎՊՄԻ –ի գլխխորհրդի կողմից

(արձրանագր. թիվ 6_«11»_ 07_2013թ.)

Վանաձոր 2013

1.Ընդհանուր դրույթներ

1.1.Սույն կարգով կարգավորվում է «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի քոլեջում (այսուհետ՝ Քոլեջ) սովորողների ուսանողական նպաստի (ուսման վճարի լրիվ ու մասնակի փոխհատուցումների), պետական կրթաթոշակների հատկացման գործընթացները :

1.2.Սույն կարգի մշակման իրավական հիմքերն են «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «ՀՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 01.03.2007թ. 297 - Ն որոշումը, ինստիտուտի կանոնադրությունը:

1.3. Սույն կարգի դրույթները կիրարկման են դրվում ընդունման պահից :

2.Ուսման վճարի լրիվ փոխհատուցում՝ ուսանողական նպաստի ձևով.

2.1 Ուսանողական նպաստը փոխհատուցում է (լրիվ կամ մասնակի) սովորողի ուսման վճարը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, Քոլեջի ֆինանսական միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին :

2.2. Ուսման վճարի լրիվ փոխհատուցում՝ ուսանողական նպաստի ձևով, պետության կողմից տրամադրվում է օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերին՝

ա) Առանց ծնողական խնամքի մնացած սովորողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

բ) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

գ) Ձուկված զինծառայողի երեխա-սովորողներին՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

դ) Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած սովորողներին՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

ե)Պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված սովորողներին /առկա ուսուցում/:

2.3.Առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ընդունելության կանոններով սահմանված կարգով՝ Քոլեջի սովորողներին:

2.4. Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստ տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող սովորողներին՝ մրցութային հիմունքներով:

3. Ուսման վճարի մասնակի փոխհատուցում՝ ուսանողական նպաստի ձևով.

3.1 Վճարովի հիմունքներով սովորողների համակազմի մինչև տասը տոկոսին, սովորողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ տրամադրել ուսման վճարի մասնակի փոխհատուցում .

3.1.1 Սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) սովորողներին՝ 20%-ի չափով,

3.1.2 Միակողմանի ծնողազուրկ (միածնող) սովորողներին՝ 20%-ի չափով,

3.1.3 Երեք և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների սովորողներին՝ 20%-ի չափով,

3.1.4 Վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների սովորողներին՝ 20%-ի չափով,

3.1.5 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ ծնող ունեցող սովորողներին՝ 20%-ի չափով,

3.1.6 Հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա- սովորողներին՝ 20%-ի չափով,

3.1.7 Մինչև մեկ տարեկան երեխա ունեցող սովորողներին՝ 20%-ի չափով,

3.1.8 Քոլեջի կամ ինստիտուտի աշխատող ծնող ունեցող սովորողներին՝ 20%-ի չափով:

3.2. Սովորողին ուսման վճարի մասնակի փոխհատուցում կարող է տրամադրվել միայն մեկ տարակազով:

3.3 Առաջին կուրսում սովորողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը կատարվում է սկսած երկրորդ կուրսից :

3.4 Սովորողը կարող է կորցնել ուսման վարձի մասնակի փոխհատուցման արտոնության իրավունքը ինստիտուտի ներքին կարգապահական կանոնները խախտելու դեպքում:

3.5. Ուսանողական նպաստներ տալու գործառույթներն իրականացնում է քոլեջը :

4. Ուսանողական նպաստ տրամադրելու մրցույթին մասնակցելու մասին.

4. 1. Բժշկական փաստաթղթով հիմնավորված՝ քննաշրջանին հարգելի պատճառով չմասնակցած և «Բաց դռների օրեր» -ի ընթացքում դրական գնահատական ստացած սովորողը մասնակցում է մրցույթին:

4.2. Մրցույթին չեն կարող մասնակցել քննաշրջաններում «անբավարար» ստացած և անհարգելի պատճառով բացակայած սովորողները:

4.3 Ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ ուսանողական նպաստի տրամադրման գործընթացի վերաբերյալ սովորողների իրազեկումը և դիմումների ընդունումը կատարում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում:

4.4. Ուսանողը գրավոր դիմում է քոլեջի տնօրենին՝ կցելով կարգավիճակը հաստատող փաստաթուղթ:

4.5. Քոլեջի տնօրենի կողմից փաստաթղթերը ներկայացվում են ռեկտորի հրամանով ձևավորված քոլեջի մանդատային հանձնաժողովի քննարկմանը : Արդյունքները քոլեջի տնօրենը ներկայացնում է ռեկտորի հրամանագրմանը :

5. Պետական կրթաթոշակի տրամադրում.

Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է բարձր առաջադիմություն ցուցաբերած, հասարակական ակտիվություն , պատշաճ վարքագիծ դրսևորած սովորողներին:

5.1. Պետական կրթաթոշակի թվաքանակը և չափը հաստատում է ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարի տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով քուլեջին հատկացված միջոցների սահմաններում:

5.2. Սովորողների ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են՝

ա) գեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակած աշխատանքներ (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում),

բ) մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին,

գ) մասնակցությունը քուլեջի և բուհի ուսանողական, հասարակական աշխատանքներին:

5.3. Սովորողին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր կիսամյակի համար՝ համաձայն սույն կարգի 2.4 կետով նախատեսված պայմանների: Նախատեսված պայմանները չապահովելու դեպքում սովորողը զրկվում է պետական կրթաթոշակից:

5.4. Ինստիտուտի ներքին կարգապահական կանոնների խախտումը կարող է հիմք ծառայել սովորողին պետական կրթաթոշակ չհատկացնելու կամ կրթաթոշակից զրկելու համար:

5.5. Կրթաթոշակի հատկացման համար քուլեջից հավակնորդների ցուցակը ներկայացվում է ռեկտորին՝ հրամանագրման: